

ԱՆԳԼԵՐԵՆԻՑ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՎԱԾ ԱՌԱՋԻՆ ԵՐԿԸ

Մ. Մ. ԱՍԼԱՆՅԱՆ

Անգլերենից հայերեն թարգմանված առաջին գործը Ջոնաս Հանուեյի Նադիր շահի կենսագրությունն է. որը լույս է տեսել Մադրասում 1783 թ.¹, Յավոթ, թարգմանչի՝ Պողոս Միրզայանի մասին մեզ քիչ բան է հայտնի, այն էլ քաղված նրա գրքում ամփոփված հատ ու կենտ տեղեկություններից:

Մնունդով «ամիթեցի» (Դիարբեքիր), ուսում առած Նոր Զուղայի Ամենափրկիչ եկեղեցու դպրոցում, այնուհետև նա էլ բազմաթիվ այլ տարագիր հայերի նման ապաստան է գտել Հնդկաստանում: Հայերենից բացի տիրապետելով նաև պարսկերեն և թուրքերեն լեզուներին և Կալկաթայում բավարար շահով հմտանալով անգլերենի իմացության մեջ, Միրզայանը 1770-ական թթ. ժառայել է անգլիական դատարանում իբրև թարգմանիչ: Գրքի վերջաբանում նա բնութագրված է որպես «այր երկայնամիտ», որը թարգմանել է այդ գործը, «միմիայն ի մխիթարութիւն և օգնութիւն իր ազգին»²:

1779 թ., ինչպես ասված է ներածական խոսքում, Միրզայանը ավարտին է հասցրել իր թարգմանությունը: 1780 թ. սկսված տպագրությունը (այդպիսին է տիտղոսաթերթի թվականը) ընդհատվել է Հեյդար Ալի-խանի Կարնատիկ կատարած արշավանքի հետևանքով, վերսկսվել է 1782 թ., պատերազմական գործողությունների դադարից հետո և ավարտվել է 1783 թ.: Այս տարեթիվով է նշված գրքի վերջաբանը: Հալ բանասերներին մինչև օրս հայտնի չէր անգլիական սկզբնաղբյուրը, որից կատարվել է թարգմանությունը: Նրանք բոլորը սահմանափակվել են՝ նշելով միայն անգլիացի հեղինակի անունը, որի հետևանքով այնպիսի տպավորություն է ստացվել, որ բնագրի և թարգմանության վերնագրերը նույնն են:

Մենք ի հայտ բերեցինք Միրզայանի թարգմանության անգլիական սկզբնաղբյուրը: Դա Ջոնաս Հանուեյի ստվարածավալ (մոտ 900 էջ) «Պատմական ակնարկ Կասպից ծովի վրա բրիտանական առևտրի մասին»³ գիրքն է, ուր նկարագրված է ռուսական ճանապարհով դեպի Պարսկաստան հեղինակի կատարած ուղևորությունը: Գրքի վերջում, իբրև հավելված, տրված են «Հեղափոխությունները Պարսկաստանում» և «Նադիր Կուլիի պատմությունը» աշխատությունները: Միրզայանը թարգմանել է միայն այս վերջին հավելվածը: Ինչն է դրդել Միրզայանին թարգմանության նյութ դարձնել հենց Նադիր շահի կենսագրությունը: Նյութի այս ընտրությունը տարակուսանք է հարուցել որոշ հայ բանասերների մոտ: «Դժվար է երևակայել, գրում է Ա. Կա-

¹ Հ ա ն ու ե, ան գ լ ի ա ճ ի. Պատմագրութիւն վարուցն և գործոց Նադիր շահ թագավորին պարսից. Մադրաս, 1783, թարգմ. Պողոս Միրզան (այսուհետև՝ Պատմագրութիւն):

² Պատմագրութիւն, էջ 3, 180:

³ Jonas Hanway. An historical account of British trade over the Caspian sea: with a Journal of travels from London through Russia into Persia, and back again through Russia, Germany and Holland, to which are added the Revolutions at Persia during the present century with the particular history of Nadir Kouli. London, 1753, 4 vols. (Վերջերումները՝ 1754 թ. երկհատորյա վերահրատարակություններից. էջերը կնշվեն սողմախիշում):

⁴ Միրզայանը գրել է. «Այս յատոր միայն պարունակէ զմասն ինչ համարվոյ Նադիրին, ոչ ձեռնահաս լինելով ինձ ջրուորն թարգմանել» (Պատմագրութիւն, էջ 179):

րինյանը, թե հնդկահայ առաջավոր գործիչներին հայտնի չէր արևելյան դեսպոտիայի այդ ներկայացուցչի իրական դեմքը: Անշուշտ հայտնի էր: Սակայն չնայած դրան և, որքան էլ այդ զարմանալի է, հենց այդ գործիչները թարգմանում և 1780 թ. հրապարակում են անգլիացի Հանուելի մի գիրքը՝ Նադիր շահի մասին և արձագանքում Աբրահամ Կրետացուն՝: Կարծիք է հայտնվել, որ իր թարգմանությամբ Միրզայանը հետապնդել է միայն մի նպատակ՝ ցույց տալ արևելյան բռնակալության կործանարար էությունը և, ի դեմս Նադիր շահի, նրա տիպիկ ներկայացուցչին, որ դրանով իսկ թարգմանիչը բացահայտել է իր կապը ...հայ հասարակական մտքի այն թևի հայեցողության, որ միտում էր բուրժուական հանրապետական կարգեր ստեղծել ակնկալվող ազատ Հայաստանում⁶:

Սակայն այսպիսի մեկնությանը հակասում է գրքի վերջաբանը (սկզբնաբանությունը)՝ գրված նրանց անունից (Շահամիրյան, Հակոբ Սիմոնյան-Այուրյան, Հովհաննես Մարգար, Հովհաննես Մատուր, Քամալ Մահտես, Հակոբ Պետրոսյան), ովքեր իրականացրել էին թարգմանության տպագրությունը: Վերջաբանում խոսքը Նադիր շահ բռնակալի մասին չէ: Այնտեղ խոսվում է միայն Նադիր շահի, որպես իր հայրենիքի ազատարարի մասին, որը Պարսկաստանից դուրս էր վռնդել աֆղան և թուրք զավթիչներին⁸: Վ. Փարթամյանը գտնում է, որ հակասություն կա գրքի բովանդակության և վերջաբանի միջև, որի հեղինակները, ճանկախ թարգմանությունից բխող տրամաբանական հետևության, Նադիր շահին գնահատում են բոլորովին այլ տեսանկյունից, քան այդ կա Միրզայանի մոտ: Նրանք Նադիրին վերագրում են իր ժողովրդին փրկած լինելու վեհ առաքելությունը, վրեժխնդրության արդար պահանջը են տեսնում նրա պատերազմական գործողությունների մեջ և, ամենաուշագրավը, նրան հերոսի տիպար են համարում ազատության ձգտող ամեն մի ազգի համար⁹:

«Ինչպես տեսնում ենք,— եզրակացնում է Փարթամյանը,— նույն գրքի սահմաններում բախվում են հակընդդեմ գաղափարներ, որոնք տառացիորեն իրար հաջորդելով՝ արտացոլում են խմորումներով հարուստ պատմական մի ժամանակաշրջանի հայ հասարակական մտքի ուրույն վիճակը»:

Որպեսզի բացատրի, թե ինչ կերպ են մի գրքի մեջ տեղ գտել այդքան տարբեր հայացքներ, Փարթամյանը առաջ է քաշում այն վարկածը, որ թարգմանության տպագրությունը ձեռնարկվել է և ավարտին է հասցվել տարբեր մարդկանց կողմից: Որ տպարանի տեր Շահամիրյանը, լինելով թարգմանչի համախոհը Նադիր շահի հանդեպ իր բացասական վերաբերմունքում, ոչ մի առնչություն չի ունեցել վերջաբանի հետ: Որ պատերազմական գործողությունների հետևանքով ընդհատված գրքի տպագրությունը, խաղաղություն հաստատվելուց հետո, շարունակել են ճնոր մարդիկ, որոնք այլ հայացքներ ունեին և այդ պատճառով էլ վերջաբանում գովեստի խոսքեր են ասել պարսից արքայի հասցեին¹⁰:

Նախ պետք է ասել, որ մեզ չեն հասել որևէ գրավոր վկայություններ այն մասին, թե եղել են ինչ-որ գաղափարական հակասություններ Շահամիրյանի և նրանց միջև, ում նա տրամադրել էր իր տպարանը թարգմանության տպա-

6 Ա. Բ. Կարինյան. Անարկտիկ հայ պարբերական մամուլի պատմություն. հ. 1, Երևան, 1956, էջ 164:

6 Վ. Փարթամյան. Հայ-անգլիական դրական կապեր. Երևան, 1975, էջ 29:

7 Փարթամյանի այն կարծիքը, թե սկզբնաբանությունը կոլեկտիվ ստեղծագործություն է, մեզ թվում է անհիմն: Ամենայն հավանականությամբ, այն գրված է Հակոբ Սիմոնյանի կողմից:

8 Պատմագրություն, էջ 181—184:

9 Վ. Փարթամյան. նշվ. աշխ., էջ 30, 32:

10 Նույն տեղում, էջ 33:

գրության համար, կամ որ Շահամիրյանը որևէ ժամանակ հեռու է կանգնած եղել իր տպարանի հրատարակչական գործից:

Բացի այդ, թարգմանչի ներածական խոսքից բնավ չի կարելի եզրակացնել, որ նա Հանուբյի գրվածքը ընկալում է որպես միջոց Նադիր շահին միմիայն պախարակելու համար: Խոսելով վերջինիս մասին, նա օգտագործում է «մեծ», «քաջ», «սքանչելի» և նման ածականներ, նշելով, որ նրա «ղվարս մեծագունից» և «գերազույն գործոց» պատմությունը ուսանելի է և պատմական հետազոտությունների նյութ է դարձել¹¹:

Հանուբյի գրքի և հնդկահայ գործիչների գաղափարական միտումների ավելի ուշագիր զննությունը մեզ թույլ է տալիս այլ եզրակացություն անել: Ամենից առաջ հարկ է պարզել, թե ի՞նչ է իրենից ներկայացնում Նադիր շահի անգլիական կենսագրությունը: Արդյոք իրո՞ք նրա հեղինակը իր հերոսի կյանքը և գործերը պատկերել է բացարձակ ժխտական դիրքերից: Որպես առևտրական Հանուբյը դրա համար ոչ մի պատճառ չունի: Մենք գիտենք, որ միմիայն շնորհիվ Նադիր շահի միջամտության նրան փոխհատուցում վճարվեց այն նյութական վնասների համար, որ նա կրել էր Աստարաբադի ապստամբության ժամանակ (I, 376): Բացի այդ, նրան չէր կարող դուր չգալ Նադիրի պրոանգլիական քաղաքականությունը:

Ինչ վերաբերում է Նադիր շահի անձի և պատմական դերի նրա գնահատականին, ապա այն միանշանակ չէ և կարիք ունի ավելի համակողմանի ըննություն:

Հանուբյը Նադիր շահի առաջին կենսագրությունից էր: Նման աշխատանք գրելու համար նա իր ձեռքի տակ շատ քիչ նյութ ուներ: Ձտիրապետելով պարսկերենին՝ նա զրկված էր պարսկական սկզբնաղբյուրներից օգտվելու հնարավորությունից: Նադիրի քարտուղար և արքայական պատմաբան Միրզա Մուհամմեդ Մեհդի խանի աշխատության՝ «Թարիխ ի Նադիրի»-ի անգլերեն տարբերակը՝ թարգմանված Ու. Ջոնսի կողմից, լույս տեսավ միայն 1773 թ.: Նրա իսկ կողմից կատարված ֆրանսերեն թարգմանությունը լույս է տեսել 1766 թ.: Հավանական է, որ Հանուբյին ծանոթ էին ֆրանսիացի Ժ. Ա. Սերսոյի անգլերեն թարգմանված «Պարսկաստանի հեղափոխությունների պատմությունը» (1728 թ.) և «Թահմազ Կուլի խանի պատմությունը» (1740 թ.), վերահրատարակված «Թահմազ Կուլի խանի լրիվ պատմությունը» վերնագրով¹²:

Անգլիացի հեղինակներից Հանուբյին նախորդել է Ջեյմս Ֆրեյզերը¹³, որի գրքում, սակայն, ուշագրության կենտրոնում է Նադիրի դեպի Հնդկաստան կատարած արշավանքը: Նրանում ավելի հանգամանալի նկարագրված է Մոհոլների կայսրությունը իրանական ներխուժումից առաջ, քան Պարսկաստանը: Չնայած սկզբնաղբյուրների սակավությանը, Հանուբյը, ի տարբերություն իր նախորդների, փորձ է արել թափանցել Նադիրի բնավորության գաղտնիքների մեջ, բազմակողմանիորեն բնութագրել է նրա սինձը: «Ժամանակն է,— գրում է Հանուբյը,— ազատել Նադիրի կերպարը դիմակից, խոսել նրա մասին ազատ, առանց որևէ բան լուծյան մատնելու» (I, VIII):

Ջոն էլտոնից, որը ծառայում էր Նադիր շահի մոտ, Հանուբյը անշուշտ շատ արժեքավոր տեղեկություններ էր ստացել իրանի շահի բնավորության մանրամասների վերաբերյալ:

Հանուբյը օգտվել է նաև պատմական անեկդոտներից: Նա գրում է, որ երբ գտնվում էր Պարսկաստանում, հետաքրքրությունը դրդեց նրան գրի առնել Նադիր շահի մասին մի շարք անեկդոտներ: «Դա ինձ հնարավորություն տվեց,— գրում է նա,— թափանցել այդ արտառոց մարդու էության մեջ և քանի որ ես չգտա ընդարձակ հետևողական պատմական վավերագրեր նրա

¹¹ Նույն տեղում, էջ 3:

¹² Jean Antoine Cerceau. The complete history of Thamas Kouly Khan. 1750.

¹³ James Frazer. The History of Nadir shah, formerly called Thamas Kouly Khan. London, 1742.

մասին, ես որոշեցի օգտվել սեփական գրառումներից, գումարած այն ամենին, ինչ կարողացա գտնել այնտեղ և Ռուսաստանում» (I, VIII):

Իր կենսագրական ակնարկում Հանուելը հանդես եկավ որպես այդ ժանրի զարգացման նոր ուղիներ որոնող: Վաղագույն անգլիական կենսագրական դրականության մեջ տրվում էր մարդու պարզ, ռացիոնալիստական բնութագրությունը, համաձայն որի նրա ողջ վարքագիծը թելադրված էր բնավորության մեջ գերիշխող մի որևէ կրթով: Կառչելով այս ավանդույթին՝ Նադիր-շահի կենսագիրները նրան պատկերում էին որպես փառասիրության կամ էլ գոռոզամտության ու դաժանության կրթերի գերի:

Հրաժարվելով «տիրապետող կրթի» սկզբունքից՝ Հանուելը փորձեց ցույց տալ Նադիրի բնավորության թարդ և հակասական էությունը: Կենսագրության վերջին՝ XVI գլխում, որը վերնագրված է «Նադիր Կուլիի բնավորությունը», Հանուելը դրում է. «Նադիր Կուլիի բնավորության և ոչ մի գիծը տիրապետող չէր: Նա ապրում էր ամենատարբեր մարդկանց կյանքով՝ գյուղացու, նվաճողի, սպասավորի, ավազակի, զինվորի, զորավարի, շահի» (II, 436—445):

Նվ այնուհետև՝ «Նրա բնավորության մեջ մենք տեսնում ենք ներքին դաժանությունը, Հանիթալի խորամանկությունը, Սցիպիոնի արիությունը, Կրոմվելի ճարակությունը, Կեսարի ճակատագիրը և վախճանը և այս ամենի միացությունը վայրի, չհղկված նրա բնության, սակավ կրթվածության և ահաբեկի եռանդի հետ» (436):

XVIII դարի վերջում անկում է ապրում կենսագրության ժանրի վաղ, խրատական կոնցեպցիան, որը բարոյախոսական նպատակներ էր հետապնդում և հակված էր մարդկանց բաժանել դրականի և բացասականի: Այն իր տեղը զիջեց ավելի խոր մեկնաբանության, որը, հրաժարվելով մարդու մասին սխալ գոյություններից, հանդուրժողականություն էր դրսևորում դեպի մարդկային թուլությունները և թերությունները: Տարածում գտավ այն խենթակետը, որ մարդկանց մեծամասնության մոտ բարին ու չարը, ուժը և թուլությունը միախառնված են: Ձկան մարդիկ, որոնց մոտ բնավորության որոշ ստվերոտ կողմերը չմիահյուսվեն որոշակի առաքինությունների հետ» (436), գրում է Հանուելը, ի հայտ բերելով ժամանակի նորագույն տեսակետների հետ իր համախոհությունը:

Կենսագիրները սկսեցին պատկերել մարդու էության երկակիությունը, նկատել նրա բնավորության տարօրինակությունները: Այժմ կենսագիրների էթիկական խնդիրը կայանում էր նրանում, որ ավելի շատ դիտեն և ոչ թե փառաբանեն կամ պարսպեն¹⁴:

Հենց այս սկզբունքով էլ Հանուելը ձգտել է բնութագրել Նադիր շահին: Նրա պատկերմամբ Նադիրը ի ծնե տաղանդավոր, բացառիկ անձնավորություն է: «Բնությունը,— դրում է Հանուելը,— ուզուրպատորին առանձորեն օժտել էր արժեքավոր հատկություններով: Նա հսկայական եռանդի տեր էր, ինչը պակասում էր նրա նախորդին՝ թուլամորթ և փափկասուն շահ Հուսեյնին: Նա օժտված էր ֆիզիկական ուժով, լավ առողջությամբ, տոկունությամբ, նրա վճիռները նույնքան արագ էին, որքան նրա մտքերը» (438): «Նրա հիշողությունը, նույնքան հիանալի էր, որքան պարսիկների բնավորության նրա խորաթափանց իմացությունը: Նա հեշտությամբ հիշում էր բոլոր այն մարդկանց անունները, դեմքերը, հատկությունները, որոնց հետ երբևէ գործ էր ունեցել» (437): «Ի ծնե չպատկանելով ֆեոդալական վերնախավին՝ նա իր վերաբերմունքի մեջ դեպի համարակ մարդիկ և բարձրաստիճան անձերը մեծ տարբերություն չէր դնում» (440):

Նադիր շահը, ըստ Հանուելի, ազատ էր նաև կրոնական նախապաշարումներից: «Նա ուղղակիորեն իրեն չէր դասում ո՛չ շիաներին, ո՛չ էլ սունիներին, սակայն երբ պահանջում էր իրավիճակը, նա հավասարապես ուշադիր էի երկուսի հանդեպ էլ և բավարարում էր նրանց պահանջները» (443): Հա-

¹⁴ Տե՛ս D. Stauffer. The Art of Biography in the 18th century England, London, 1941, p. 338.

նուեյր հաղորդում է, որ պարսկական պետությունը ամրապնդելու նպատակով Նադիրը մտահղացավ կրոնական ուժերի անցկացնել, սահմանելով այնպիսի պաշտամունք, որը միավորեր ոչ միայն բոլոր մահմեդականներին, այլև քրիստոնյաներին ու հրեաներին: Սակայն եթե Հանուեյը, որպես լուսավորության դարի զավակ, դրվատանքով է խոսում այն մասին, որ Նադիր շահին խորթ էր կրոնական անհանդուրժողականությունը, Հանուեյը՝ անգլիական եկեղեցու երկրպագուն հոռետեսորեն վերաբերվեց ընդհանուր կրոն ստեղծելու նրա գաղափարին (444):

Նադիր շահի՝ զորավարի և պետական գործչի շատ առավելությունները բացատրելով նրա բնատուր օժտվածությամբ, Հանուեյը հակված է նրա բացասական գծերը և սխալ վարքագիծը բացատրել արևելյան բռնակալական կարգի պայմաններով, երբ, ասում է նա, «մերժված էին ամեն տեսակի սոցիալական առաքինությունները և սովորական ազնվությունն ու վստահությունը դատարկ հնչյուն էին դարձել» (445):

Նադիրի կողմից գահին տիրանալը Հանուեյը դիտում է որպես անօրինականություն, որը հնարավոր է միայն ֆեոդալական կամայականությունների պայմաններում և այդ պատճառով էլ նրան ռեզուրպատոր է համարում և իրրե կանոն կոչում է նրան «Նադիր-Կուլի»:

Հանուեյը քննադատում է Նադիրին այն բանի համար, որ հետագայում, տնտեսական դժվարությունների հաղթահարման լավագույն միջոցը նա համարեց նվաճողական պատերազմները, որոնք վերջ ի վերջո արյունաքամ աւերեցին բանակը: Իսկ նրա հարկային քաղաքականությունը վերջնականապես սնանկացրեց Պարսկաստանը (412):

Շատ ավելի անկեղծորեն և ճշմարտացի, քան իրենից առաջ հանդես եկած եվրոպացի պատմաբանները, Հանուեյը նկարագրեց Նադիր շահի բոլոր շարագործությունները: Որպես կանոն, սակայն, նա միշտ մատնանշում է այն արտաքին պատճառները, որոնք դրդել են Նադիր շահին կատարել այս կամ այն հանցագործությունը: Հանուեյը գտնում է, որ նրա դաժանությունը կասկածամտության հետևանք էր: «Կասկածամտությունը և անվստահությունը իրենց բոլոր սարսափելի դրսևորումներով միշտ էլ առկա են եղել բռնակալների արքունիքներում և կործանել են նրանց ժամանակից առաջ» (442): «Նա դաժան էր լինում ինքնապաշտպանության նպատակով: Ասում են, որ նա հագուստի տակ մշտապես օղազրահ է կրել» (439): Միևնույն ժամանակ Հանուեյը ընդգծում է, որ իր դաժանությամբ Նադիրը Իրանի մյուս տիրակալներից ավելի վատ չէր: «Նա երբեք չեմ լսել, — գրում է Հանուեյը, — որ իր թագադրությունից հետո նա իր ձեռքով իրականացներ մահապատիժները, ինչպես դա արել են նրա նախորդները՝ շահի տիտղոսի օրինական կրողները» (439):

Այսպիսով, մենք տեսնում ենք, որ ըստ Հանուեյի, ինքը՝ արևելյան բռնակալական կարգն է բռնակալներ ծնում: Նրա քննադատության սայրը ուղղված է այդ կարգի և նրա հաստատությունների դեմ: Նադիր շահի կյանքի օրինակով նա ցույց է տալիս ֆեոդալական կամայականության և բռնակալության սկզբունքներին հետևելու կործանարար արդյունքները: Այս թեման չէր կարող չգրավել հայերին, որոնք իրենց վրա զգում էին այդ կարգի ունտանելի լուծը:

Միրզայանին Հանուեյի գրվածքը գրավել է նախ և առաջ իր հակաբռնակալական ուղղվածությամբ: Նադիր շահի մահվան նկարագրությունը, որն ընկավ մարդասպանի ձեռքով, ավարտվում է թարգմանչի հետևյալ ընդհանրացումով. «...և այդպես ընկավ մտրակն արևելյան աշխարհի... օրինակ տալով մեզ, որ թագավորն այն, որը փոխարինել է գութը և արդարությունը (որոնք են զարդն ու պայծառությունը իր տերության) վշտով և անողորմությամբ, պետք է իմանա, որ նախասահմանողը մի օր նրան կսանձահարի և կխափանի նրա անօրեն գործերը...»¹⁵:

¹⁵ Պատմագրություն, էջ 174:

Ճշմարտացի պատկերելով Նադիր շահի կյանքը, որպես արևելյան բացարձակ միապետության արատների կրողի, Հանուելը նրան համարում է և այս կարգի ծնունդ։ Լինելով լուսավորության գաղափարախոսության կրող՝ նա համոզված է, որ լուսավորությունը, կրթությունը և ավելի արդար սոցիալ-բաղադրական միջավայրը այլ ուղղություն կտալին Նադիրի տաղանդավոր անձի դարդացմանը։ Այս ամենի հետ միասին, իր գրքի վերջում Հանուելը կետ առ կետ թվարկում է Նադիր շահի «անվիճելի պատմական երախտիքը»։

«I. Պարսկաստանը պարտական է Նադիր Կուլին աֆղանական լծից իր ազատագրմանը»։ «II. Նրան այն պարտական է գահի վրա օրինական միապետի վերականգնումով»։ «III. Նրա ղեկավարության և արիության շնորհիվ պարսկական միապետությունը 8 տարվա ընթացքում հետ նվաճեց բոլոր այն մարզերը, որոնք նրանից խլված էին շահ Հուսեյնի տիրապետության տարիներին» (448)։ Նադիր շահի որոշակի դրական դերը չի ժխտվում նաև սովետական պատմագրության կողմից¹⁶։

Հայերի ընկալմամբ Նադիր շահը իր դեսպոտիզմով, կամայական և ապօրինի գործելակերպով, արյունահեղությամբ և այլն, քիչ էր տարբերվում Իրանի մյուս տիրակալներից։ Նրա օրոք հայ ժողովուրդը նույնպես ապահովագրված չէր ֆիզիկական ընաշնջումից, բռնություններից և կողոպուտից։ Հենց նրա տիրակալության տարիներին սկսվեց հայերի դանգվածային արտագաղթը դեպի Հնդկաստան և այլ երկրներ։ Հնդկահայ գաղութի առաջադեմ գործիչներին այս ամենը քաջ հայտնի էր, քանի որ նրանց մեծ մասը Պարսկաստանից էր։ Նրանք առավել քիչ էին հակված իդեալականացնելու Նադիր շահին և բազմիցս նրան քննադատել են։

Հովսեփ էմինը 1757 թ. Պրուսիայից, գործող բանակից, գրել է Լոնդոն իր «Հոմանավորութիւն-տիկնանցը»։ «Հինգ և կես տարում ևս շատ բան տեսա։ Դա ավելին է, քան տեսել է Կուլին (Նադիր Կուլի խանը—Մ. Ա.)։ Մեծ մարդ դառնալուց առաջ, յակայն, ես չեմ պատրաստվում դառնալ նույնպիսի մի բռնակալ, ինչպիսին նա էր։ Թող ես կործանվեմ և անէանամ, եթե իմ մեջ կա բռնակալության նշույլ անգամ»¹⁷։

Նույն էմինը, հաղորդելով լուրջ նորթումբելանդին այն մասին, որ իր հոր երկու եղբայրները զոհվել են Կուլի խանի բանակում ծառայելիս, իսկ հայրը փախել է Հնդկաստան, գրել է. «Այդ բռնակալի սրած թրից ավելի շատ նրա բանակի սպաներ են ընկել, քան թշնամիներ»¹⁸։ Մովսես Բաղրամյանը իր «Նոր տետրակում» նույնպես քննադատական խոսք է ասել Նադիր շահի հասցեին։

Այդ դեպքում ինչով բացատրել «վերջաբանության» գովաբանական տոնը։ Կարող էին արդյոք այստեղ դեր խաղալ պատմական հիշողությունները։ Հնդկահայ գործիչները, օրինակ, չէին կարող դրականորեն չվերաբերվել Նադիր շահի կրոնական հանդուրժողականությանը, այն բանին, որ նա դեմ էր հայերին բռնի կերպով մահմեդականացնելուն, որ նա բարեկամական հարաբերությունների մեջ էր կաթողիկոս Աբրահամ Կրետացու հետ և որ էջմիածին շատ արտոնություններ տվեց։ Նրանք չէին կարող չիմանալ Նադիրի համադորձակցության մասին Սյունիքի ազատագրական շարժման առաջնորդների հետ ընդդեմ օսմանյան նվաճողների, այն մասին, որ նա անկախություն չը-

¹⁶ См. Всемирная история. Т. V, М., 1958, с. 242—243.

¹⁷ The Life and Adventures of Joseph Emin, an Armenian, written in English by himself. 2nd ed. Calcutta, 1918, p. 79.

¹⁸ Նույն տեղում, էջ 58—60։ Մենք գիտենք, որ էմինը Լոնդոնում ծանոթացել էր Հանուելի հետ։ Վերջինս օգնել էր նրան ռուսական դեսպան Գուլիգինի միջոցով անձնագիր ստանալ Ռուսաստան մեկնելու համար։ Շատ հնարավոր է, որ հենց էմինը, տարիներ անց, Կալկաթայում խորհուրդ էր տվել Պ. Միրզայանին թարգմանել Հանուելի գիրքը։

նորհեց Ղարաբաղի մելիքներին: Իհարկե, ճանաչելով հայ մելիքների իրավունքները և արտոնությունները, որը նրանք պայքարով էին նվաճել, նա հետապնդում էր իր ուրույն նպատակները: Ազատելով հայ մելիքներին տեղական խաների կամայականություններից, նա նրանց ենթարկեց իր անմիջական իշխանությանը: Նա ձգտում էր վերջ տալ հայերի ռուսական կողմնորոշմանը, հավատարիմ մելիքների և հոգևորականության միջոցով ապահովել հայ ժողովրդի իրանական կողմնորոշումը և հնազանդությունը:

Սակայն կարծում ենք, որ եթե նշված փաստերը կարող էին համակրանք առաջացնել դեպի Նադիրը հայության որոշ մասի մոտ XVIII դարի 20-ական թթ., ապա 80-ական թթ. այդ փաստերը որևէ գործնական նշանակություն չունեին և չէին կարող պատճառ դառնալ նրա փառաբանման համար: 1780-ական թթ. հայ ժողովրդի բոլոր խավերը արդեն ռուսական կողմնորոշում ունեին¹⁹, Բանակցությունները, որ այդ թվականներին սկսեցին վառել Ռուսաստանի պետական գործիչները լազարների և Արղուիսյան հետ և ռուսների նախատեսվող պարսկական արշավանքը նշանավորեցին հայ-ռուսական հարաբերությունների մեջ նոր փուլի սկիզբը²⁰:

«Վերջաբանության» մեջ մենք չենք էլ հանդիպում անցյալի մասին իշխողությունների: Նրանում խոսքը վերաբերում է միայն Նադիր շահի երախտիքին, որպես օտարերկրյա զավթիչներից սեփական հայրենիքի ազատագրողի և նրա այն անձնական հատկություններին, որոնց շնորհիվ նա իրականացրեց իր այդ պատմական առաքելությունը: Հանուն ի կենսագրական ակնարկի ամփոփիչ մասում թվարկված Նադիր շահի պատմական արժանիքները յուրատեսակ լեյտմոտիվ ծառայեցին «Վերջաբանության» համար:

Մենք գիտենք, որ Նադիր շահը գլխավորեց Պարսկաստանի ազատագրության գործը: Նա իր երկրից դուրս վճռեց աֆղան նվաճողներին և 1732—34 թթ. հետ գրավեց թուրքերի կողմից գրավված բոլոր հողերը: Գլխավորապես սրա համար է, որ Շահամիրյանի համախոհները նրան աղագային-ազատագրական պայքարի կազմակերպողի օրինակ էին համարում:

Չենց այդ պատճառով է, որ նրանք անհրաժեշտ գտան Նադիր շահի պատմության հրատարակությունը: Հարկավոր է, ասված է «Վերջաբանության» մեջ, որ «ի միջին իւրաքանչիւր ազգի ելանել զայնպիսի այր քայ ջատագով, առ ի վրեժխնդիր լինելոյ ընդդէմ յափշտակողաց սեպհական ժառանգութեան իրոյ»²¹, նրանք երազում էին հայ ազգի մեջ էլ մի այդպիսի անձնավորության երևան գալու մասին, որը կարող լիներ հետ նվաճել իրենց հայրենիքը և վրեժ լուծել սեփական ժողովրդի տառապանքների համար: Մի՞թե չկան նման պատմություններ մեզ մոտ, հարց է տալիս վերջաբանի հեղինակը և պատասխանում է՝ «կայ և գտանի ի բազում տեղիս»: Անհրաժեշտ է միայն դրանք ի հայտ բերել, որպեսզի «Հայկի ժառանգները» ճանաչեն իրենց նախնիների երկիրը: Նրանք վստահ էին, որ նման պատմությունների հրապարակումը կծառայի հայերի ինքնաճանաչմանը և կզրդի հետևել հայրենասիրության օրինակներին: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում այն փաստը, որ «Վերջաբանության» հեղինակը Նադիր շահին համեմատում է Հեյդար Ալի խանի՝ XVIII դարի Հնդկաստանում ամենաաչքի ընկնող անձնավորության հետ, որը գլխավորել էր ազատագրական պայքարը անգլիական գաղութարարների դեմ: 1761—1782 թթ. Հեյդար Ալի խանը անգիջում պայքար է մղել անգլիացիների և Արևելահնդկական ընկերության դեմ ու ստեղծել է ուժեղ բանակ: Հեյդար Ալին, իսկ այնուհետև նրա որդին՝ Թիփու սուլթանը ձգտում էին միավորել Հնդկաստանի բոլոր պետությունները մի միության մեջ՝ անգլիացի նվաճողների դեմ պայքարելու համար: Մարքսը գրել է. «Հեյդար Ալին և նրա որդին՝ Թիփու Սաիբը, Ղուրանի վրա երգվեցին հավերժ ատելություն տաժել

¹⁹ См. А. Р. Иоаннисян. Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия. Ереван, 1947, с. 193.

²⁰ Նույն տեղում, էջ 21:

²¹ Պատմագրություն, էջ 180:

հանդեպ անգլիացիները և ոչնչացնել նրանց»²²։ Ճիշտ է, այդ փորձը ձախողվեց՝ բախվելով հնդկական ֆեոդալների սեպարատիզմին։ Սակայն մինչև 1784 թ. նրանք շատ հոգս պատճառեցին անգլիացիներին։

Նշանակալից է, որ թարգմանության հրատարակության եռանդուն մասնակիցը՝ Հակոբ Սիմոնյանը, հետագայում գրեց Հնդար Ալի խանի կյանքի պատմությունը։ Սիմոնյանը մոտիկից ճանաչել է և բարեկամական կապերի մեջ է եղել Հնդար Ալու հետ, հաճախ այցելել է նրա արքունիքը։ Մայսուրի տիրակալը հովանավորել է խելացի և կրթված վաճառականին և նրան աղի առևտրի մենաշնորհ է տվել։ Հնդար Ալու կենսագրության մեջ Սիմոնյանը նույնպես չի ձգտել մեղմել արևելյան տիրակալի կերպարը։ Նա առանց թաք-օրենելու. ճշմարտացի նկարագրել է իր հերոսի բոլոր նենգ արարքները, դավերը, իշխանության ուզուրպացիան, դաժանությունը և արյունահեղությունները։ Ի դեպ, XVIII դարի արևելյան բռնակալական երեքի հասկացողություններով այդ ամենում ոչ մի արտառոց բան չկար։ Այդ իսկ պատճառով նրանք չէին նսեմացնում Հնդար Ալու անձը, որի ողջ գործելակերպը հետապնդել է մի նպատակ՝ Մայսուրի ամրապնդումը, ռազմական հզորացումը, հարևան թագավորություններից ու անգլիացի նվաճողներից նրա անկախությունը ապահովելը։ Իր կենսագրական գործում Սիմոնյանը գնացել է Հանուեյի հետքերով։ Եվ ճիշտ այնպես, ինչպես Շահամիրյանը իր տպարանում հրատարակեց Նադիր շահի կենսագրությունը, տասը տարի անց Հարություն Շամվոնյանը անհրաժեշտ է համարել «Ազդարարում» տպագրել Հնդար Ալու պատմությունը²³։

Այսպիսով, մենք գալիս ենք այն եզրակացության, որ Մադրասի հայկական տպարանում Նադիր շահի կենսագրության տպագրությունը հետապնդել է որոշակի գաղափարական նպատակ, որը քաջ գիտակցել են և՛ տպարանի տնօրեն Շահամիրյանը, և՛ տպագրությունը իրականացնողները²⁴, և՛ «Վերջաբանության» հեղինակը։

Եթե թարգմանիչ Պողոս Միրզայանը Հանուեյի կենսագրական ակնարկի գրավիությունը տեսնում է գլխավորապես ֆեոդալական, արևելյան բռնատիրական կարգի արատավորությունը բացահայտելու մեջ, ապա Մադրասի հայ գործիչներին տվյալ պատմական ժամանակահատվածի համար ավելի կարևոր երևաց ընդգծել հայրենիքի ազատագրության թեման։ Պատահական չէ, որ նրանք ձեռնարկեցին այդ գործի տպագրությունը Հնդար Ալի խանի՝ անգլիացիների դեմ մղվող պատերազմի ամենաբոլորոքուն պահին։ Եվ թեպետ մադրասահայերը տառապանքների ենթարկվեցին և հսկայական նյութական վնասներ կրեցին այն ժամանակ, երբ Մադրասը ձեռքից ձեռք էր անցնում, «Վերջաբանության» հեղինակը շուտապես Հնդար Ալու հասցեին գովեստի խոսքեր ասելուց և համեմատելով նրան Նադիր շահի հետ՝ երկուսին էլ դրվատում էր որպես իրենց երկրների քաջ և ձեռներեց հայրենասերների։

²² К. М а р к с. Хронологические выписки по истории Индии (664—1858). М., 1947, с. 76.

²³ Տե՛ս «Ազդարար», Մադրաս, 1794—95, № 9—18։

²⁴ Վերջաբանի հեղինակը թվարկել է բոլոր նրանց, ով շարել է տեքստը, ով տպագրության թուղթ է հայթայթել, ով իր վրա է վերցրել տպագրական ծախսերը և ով «ձրիաբար» տրամադրել է իր տպագրական մեքենաները։ Պատմագրություն... էջ 181։

Նադիր շահի, Հեյդար Ալի խանի և Հնդկաստանի ազգային-ազատագրական պայքարի այլ կազմակերպիչների (Միր Կասիմ, Գորգին խան և այլն) վարձագրությունը նպատակամղված էր ցույց տալու հայրենիքի փրկարարի այն իդեալի կոնկրետ մարմնավորումը, որը սկսած XVIII դարի կեսերից զբաղեցնում էր հայ հայրենասերների միտքը: Հենց այդպես, մեր կարծիքով միանգամայն ճիշտ է մեկնաբանել Ա. Ալպոյաճյանը այս թարգմանության հրապարակ գալը. գրելով, որ Շահամիրյանը ռազգային պատմության քաղված օրինակներով ազգը հրահանգելու աշխատելիս ետք. հիմա ալ օտար ազգերն քաղված պատմական օրինակներով զայն կրթելու և ազնվացնելու կաշխատի»²⁵: Մեջ բերելով մի հատված «Վերջաբանությունից», նա գրում է. «Այս տողերը շատ պերճախոս կերպով ցույց կտան, թե ինչքան խանդավառված էր Շահամիրյանը: Հայ ազգի մեջ ալ կուզեր ողջունել անիկա նատիրներու ծնունդը, վրեժխնդիր ազգին սեփական ժառանգության հափշտակողներու դեմ»²⁶:

Ազատագրական պայքարի այդ նոր իդեալը ենթադրում էր ոչ թե վերացական և պասսիվ, այլ գործուն և արդյունավետ հայրենասիրություն:

Հովսեփ էմինը հանդես եկավ որպես այդպիսի հայրենասիրության կենդանի օրինակ: Նա կոչ էր անում գործել, զենքի դիմել: Բաղրամյանը, Շահամիրյանը, Հակոբ Սիմոնյանը և այլոք նրա համախոհներն էին: Հայրենիքի ազատարարը նրանց պատկերանում էր որպես խիզախ մարտիկ, զորավար, հմուտ քաղաքագետ և մարտունակ ուժերի կազմակերպիչ: Հենց այդպիսի հատկությունների համար է Նադիր շահը դրվատվել «Վերջաբանության» մեջ, 1780-ական թթ. հայ ազատագրական շարժման զաղափարախոսները թեև իրենց բոլոր հույսերը արդեն կապում են Ռուսաստանի հետ. սակայն միաժամանակ գիտակցում էին, որ մեկը պետք է կազմակերպեր և ոտքի հաներ պայքարի իրենց՝ հայերին: Զուրկ պետականությունից, սեփական բանակից՝ նրանք երազում էին այդպիսի համախմբող կազմակերպող ուժի հայտնվելու մասին:

Այս պայմաններում է ձևավորվում հայրենիքի «հերոս-ազատարարի» իդեալը: Պարտադիր չէր նրա իշխանական կամ ազնվազարմ ծագումը: Ավելի կարևոր էին ուժեղ անհատի, հայրենասերի, պետական մտածողության կրողի, զորավարի նրա հատկանիշները: Հենց այս իմաստով են նրանց գրավել Հեյդար Ալի խանի, Միր Կասիմի, Գորգին խանի և վերջապես Նադիր շահի անձնավորությունները: Հանուեյի կենսագրական ակնարկի հրատարակության հարցում, ըստ մեզ, քիչ կարևոր չէր նաև այն հանգամանքը, որ ինչպես նրա ուղեգրությունների ողջ գրքում, այնպես էլ թարգմանված հատվածում զգալի տեղ էր հատկացված պարսկահայությանը, նրանց պատմական ճակատագրին, վաճառականության գործունեությանը: Շատ ճշմարտություններ էին ասված արևելյան բռնակալության լծի տակ հեծող հայերի ողբերգական վիճակի մասին, ինչը չէր կարող համակրանքի և երախտագիտության զգացմունքներ չառաջացնել հեղինակի հանդեպ հայ գործիչների մոտ:

²⁵ Ա. Ալպոյաճյան. Պատմություն հայ գողթականության հ. Գ, Գահիրե, 1981, էջ 399:

²⁶ Նույն տեղում, էջ 400:

ПЕРВЫЙ ПЕРЕВОД АНГЛИЙСКОГО СОЧИНЕНИЯ НА АРМЯНСКИЙ ЯЗЫК

М. М. АСЛАНЯН

Резюме

Первый перевод с английского на армянский язык (Гануэ англичанин, История жизни и дел Надир-шаха царя Персии) был издан в Мадрасе, в 1783 г. в типографии Ш. Шаамиряна. Наряду с положительной оценкой ряда личных качеств Надира, Хануей описывает и его жестокие деяния, проявления деспотического своеволия. Однако, острие критики автора направлено скорее против восточного феодально-деспотического строя, который, по его мысли, и порождает тиранию и беззаконие. К числу же «неоспоримых исторических заслуг» Надир-шаха Хануей относит то, что «благодаря его доблести и руководству персидская монархия за 8 лет отвоевала все области, которые были отняты у нее в период правления шаха Хусейна турками», что «ему Персия была обязана и своим избавлением от ярма афганцев». Если переводчика, жителя Калькутты Погоса Мирзаяна, привлекала антидеспотическая направленность биографического очерка Хануея, то для деятелей армянской колонии Мадраса более актуальной была тема национально-освободительной миссии Надир-шаха. Об этом ясно и недвусмысленно сказано в «Послесловии». В процессе формирования освободительной идеологии армян их привлекали сочинения, в которых можно было найти исторические примеры национально-освободительных акций. Характерно, что в «Послесловии» Надира сравнивают с Хейдар Али-ханом, возглавившим борьбу княжества Майсур против англичан-колонизаторов. В нем высказывается пожелание, чтобы и среди армян появились подобные личности, способные отомстить за страдания своего народа и отвоевать родную землю.